ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 185 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՐԱՅՐ ՍԱՄՍՈՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 10-ը հունիսի 2008 թվականի <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 117-Ն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը

որոշում եմ՝

1.Ճանաչել Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի բնակիչ Նորայր Սամսոնի Սարգսյանի /ծնված՝ 18/08/1947թ./ սեփականության իրավունքը փողոց 1, տուն 16 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը /1972թ./:

3. Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. օգոստոսի 04
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 186 Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով

որոշում եմ՝

Տալ շինարարության թույլտվություն <<ԺԻՐ-ԱՐ>> ՍՊԸ-ին՝ Եղեգիս բնակավայրի փողոց 1, թիվ 4 հասցեում գտնվող 10-025-0114-0025 կադաստրային ծածկագրով հողամասի վրա 45 գլուխ կովերի համար խելացի անասնաշենքի և կթման սրահի կառուցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. օգոստոսի 05
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 187 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԱՆ ՍԱՄՍՈՆԻ ՍԱՅԱԴՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով և 48-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմում գործող Եղեգիս համայնքի ավագանու 31-ը օգոստոսի 2018 թվականի «Զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 57Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի կողմից ս/թ օգոստոսի 5-ին կազմված բնակարանային պայմանների ուսումնասիրման վերաբերյալ արձանագրությունը՝

որոշում եմ՝

1. Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի բնակիչ Վարդան Սամսոնի Սայադյանին ճանաչել բնակարանի կարիքավոր և վերցնել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

- Վարդան Սամսոնի Սայադյանի որդին՝ Արամ Վարդանի Սայադյանը զոհվել է Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ 2020 թվականի հոկտեմբերի 7-ին:

- ներկա պահին Վարդան Սամսոնի Սայադյանի ընտանիքը՝ կինը և որդին, բնակվում են Արտաբույնք բնակավայրի Կենտրոնական փ. 4-րդ փկղ. տուն 1 հասցեում: Նշված տունը միահարկ է, երկսենյականոց, ՝ 7,1 X 12,5 մետր

եզրաչափերով: Տունը 4-դաստիճանի վթարային վիճակում է, պիտանի չէ վերականգնման և ուժեղացման համար և այն ենթակա է անհապաղ քանդման:

- Վարդան Սամսոնի Սայադյանի, նրա կնոջ՝ Թամարա Արտավազդի Միքայելյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ.

հիմք՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի 03.08.2021 թ. N ԱՏ-03082021-99-0329 և 03.08.2021 թ. N ԱՏ-03082021-99-0298 տեղեկանքները: Զոհված Արամ Վարդանի Սայադյանը հանդիսանում է Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի Կենտրոնական փողոցի 4-րդ փակուղի N 1 տան չորս համասեփականատերերից մեկը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. օգոստոսի 06
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 188 Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Շատին բնակավայրի բնակիչներ՝ Սիրվարդ Ենոքյանին, Զարուհի Խանոյանին, Աիդա Խանոյանին, Վրեժ Խանոյանին և Վիլեն Խանոյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում գտնվող սեփական հողամասի վրա անասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. օգոստոսի 09
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 189 Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Աղնջաձոր բնակավայրի բնակիչ Արթուր Սիմոնյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրում գտնվող սեփական հողամասի վրա հենապատի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. օգոստոսի 09
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 190 Ա

ԱՐՏԱԿ ԴԱՎԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ <<ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ, 24-րդ կետերի պահանջներով,

որոշում եմ՝

Ավագանուն ներկայացնել առաջարկ՝ Քարագլուխ բնակավայրի բնակիչ, գործարար Արտակ Դավթի Խաչատրյանին շնորհել <<Եղեգիս համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում, Եղեգիս համայնքի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. օգոստոսի 11
հ.Եղեգիս